

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՅՕԳՈՒՏ ՏԱՀԱՍՍԱՆԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ԵՒ ԵՐԵՒԱՆԻ ՈՒ ՂԱՐՍԻ Նահանգ-
ների ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐԻ մինչ ապրիլի վերջը եղած են հետևալ
չախնի նւիրարերութիւնները.

- 1) Հայոց Բարեգործական Ընկերութեան խորհրդի միջոցով մինչ ապրիլի
30 հաւաքած է 6460 ուրբլի և 600 պուղ ցորեն, որի համար
Ընկերութեան խորհուրդը հրատարակել է երեք անգամ հաշիւ,
առաջինը 711 ուրբլու (հանգանակութիւն մի խումբ երիտա-
սարդների աջակցութեամբ, տ. Վ. Ալիսանեանի,) և 50 պուղ
ցորենի. երկրորդը՝ 2271 ուրբլու և երրորդը՝ 2810 ուրբլու և
610 պուղ ցորենի. Այդ վերջին երկու անգամաւ մէջ մասնակցել
են. 1) Թիֆլիսի մի խումբ կանաչք—1000 ուրբլի. 2) Թիֆլիսի
Փիթոկան և ընկ. առևտրական տունը—1000 ու. 3) Բաքւից
Ա. Ծատուրեան—100 ու., 4) Թիֆլիսում տիկ. Ն. Առաքելեանի
ձեռքով հանգանակած 115 ու., 5) բժիշկ Վ. Արծրունու հան-
գանակած 26 ու., 6) Մնացական Խունուց 20 ու., 7) Յովհ.
և Աբր. Բունիաթեաններ 10 ու., 8) Բաքւից պ. Աբելեանի
ներկայացումից 512 ու. 20 կ., 9) Պետերբուրգում կազմած
Երեկոյթից և պատուաւոր տոմսակներից, ուղարկած պ. Գ.
Կաղուբեանի միջոցով—773 ու., 10) Թիֆլիսում օրիորդներ Վ.
և Ն. Փոնտոկեանների և աղոյց ձեռքով հանգանակած 770 ու.,
11) Օրիորդ Պապալեանի կոնցերտից—400 ու., 12) Բաքւից,
պ. Վաչեանի ուղարկածը «Մշակի» միջոցով—109 ու., 13)
Ղազարի աւանից, տ. Ա. Օհանջանեանի ձեռքով հանգանակած
—118 ու. 50 կ., 14) Թիֆլիսում տ. Շ. Սուլիսանեանի ձեռքով
հանգանակած—105 ու., 15) Թիֆլիսի հեռագրատան ծառայող-
ներից, իբր իրանց ուճկի ամսական տոկոս 23 ու. 11 կ. 16)
Ստաւրոպոլից պ. Բարսեղ Խուբլարեանցից 610 պուղ ցորեն.

Հայոց Բարեգործ. Ընկերութեան խորհրդին հասցրած է
ուրբմն զրամով — — — 6460 ուրբլի,
և ցորենով — — — 610 պուղ.

- 2) Թիֆլիսի Առևտր. բանկը, ուղարկեց Վեհ. կաթողիկոսին 3000 ռուբլի-
- 3) » ֆոխ. վարկի Ընկեր. » » » 1000 »
- 4) » Բաղաք. » » » » 1000 »
- 5) Նոր-Նախիջևանից տեղական չաջորդ Մխիթար վարդապետ Տէր-Մկրտչեանի հանգանակած և Հալոց Բարեգ. Ընկ. Նրեանի ձիւղին ուղարկած — — 1000 »
- 6) Նրեանի Թատերասէրների ներկայացումից տրւած է Հ. Բ. Ընկերութեան Նրեանի ձիւղին — — 61 »
- 7) Տիկին Տէրեան Ղորղանեանի Թիֆլիսում տւած կոնցերտի արդիւնքը, ուղարկւած է Վարս Հ. Բ. Ը. տեղական ձիւղի նախագահ Հ. Նահապետ վ. Նահապետեանին 667 »
- 8) «Մշակ» լրագրին ուղարկւած է մինչ վերջն ապրիլի — 3052 »
- 9) Նրեանում կազմած պարահանդէսի արդիւնքը, բանձնւած Հ. Բ. Ընկ. Նրեանի ձիւղին — — — 1358 26 կ.
- 10) Բաքւից եղած ժողովարարութիւն, որի արդիւնքը ուղարկւած է կաղզւանի ձրի ճաշարանին — — 512 »
- 11) Բաքւից, Առաքել Ծատուրեան, Վեհ. կաթողիկոսին — 1000 »
- 12) Թիֆլիսից, Գէորգ Յակոբեան ուղարկել է Վեհ. կաթողիկոսին մարտին 150 պուգ ցորեն, ապրիլին 100 պուգ ցորեն, ընդամենը ցորեն — — — 250 պուգ.
- 13) Թիֆլիսի ծխական դպրոցների ուսուցանողների հանգանակած և Վեհ. կաթողիկոսին ուղարկած — — 1034 ռուբլի-
- 14) Հանգուցեալ Յովսէփեան Անդրէասի կտակով Վեհ. կ.ին 50 »
- 15) Փրիդոնեան Գրիգոր և եղբայրը. Վեհ. կաթողիկոսին 500 »
- 16) Թիֆլիսից պ. Մարտիրոս Սարգսեան Նոնուփարեանց՝ Վեհ. կաթողիկոսին ալիւր — — — 600 պուգ.
- 17) Աստրախանից, օր. Խօջաբեանի կոնցերտի արդիւնք 400 ռ. և հանգանակութիւն 300 ռ. ուգ. Վեհ. կաթ. 700 ռուբլի-
- 18) Թիֆլիսից, Կուսանաց վանքի միաբանութիւնը. Վեհ. կաթողիկոսին — — — — — 200 »
- 19) Թիֆ. Թատերասէրների ներկայացումից Վեհ. կաթող. 1326 »
- 20) Շուշուց, Խ. քահ. Սկանդարեանցի ժողովածը, ուղարկւած Վեհ. կաթողիկոսին — — — — 102 »
- 21) Շուշուց հասարակական ժողովարարութ. Վեհ. կաթ. 2000 »
- 22) Աստրախանից, բժ. Առտամեանի նախաձեռնութեամբ հանգանակած. Վեհ. կաթողիկ. — — — 1500 »
- 23) Թիֆլիսի Թեմակալ Առաջնորդի միջոցով.
ա) Զատիկի ճրագալուց երեկոյեան գանձանակով ժողովւած է Թիֆլիսի եկեղեցիներից (կոպէկները չհաշւած)՝ Վանքի մալք եկե-

- ղեցում 150 ռ., Նաւթլուղում—23, Կաթողիկէ—39, Ս. Սարգիս—18, Զրկինանց—102, Նորաշէն 30, Հրեշտակապետաց—5, Քարափի—9, Քամուհնց—100, Ս. Նշան—16, Շամքորեցոց—92, Զորարաշի—18, Էջմիածնեցոց—42, Լուսաւորիչ—1, Խոջիվանքի—7, Բեթղեհէմ—19, Կուկիոյ Նորաշէն—26, Զուղուրէթ—5, Զիգրաշէն—60, Թանդուհանց—58, Ս. Կարապետ—13, Ս. Մինաս—24, Վերալի—4, (Մողնիում գանձանակ չըջւեց). իսկ ընդ ամենը — — — 848 ռ. 30 կ.
- բ) Թելաւի գործակալից ստացւած — — — 220 »
- գ) Գանձակի փոխանորդից ստացւած է—ծխական պարոնների, տիկինների և քահանաների ձեռքով հանգանակած — — — 890 ռ. 3 կ.
- դ) Մխականների հանգանակութիւն Թիֆլիսում՝ Նաւթլուղի եկեղեցու ծխականներից, պ. Ռէլտէրի ձեռքով — — — 56 » 70 »
- Զրկինանց եկ. ծխակ. պ. պ. բժ. Ս. Անանեանցի, իշխ. Բ. Արդութեանի, Ն. Աթաբէգեանի ձեռքով առ աժժմ ժողովւած է — — — 500 »
- Զուղուրէթի եկ. ծխականներից — — — 1 »
- Քամուհնց եկ. ծխականներից, պ. պ. Բ. Մելիք-Ղարազեօղեանի և Գրիգ. Վարդանեանի ձեռքով 198 »
- Ս. Կարապետի եկ. ծխականներից — — — 54 »
- Մողնու եկեղեցու ծխականների մի մասից պ.պ. բժ. Մ. Շահպարտեանցի և Ա. Արասխանեանցի տուժարով — — — 473 »
- 24) Նոր-Նախիջևանից և Ռոստովից, հանգանակութիւն Մխթար վարդապետ Տէր-Մկրտչեանի (աջակցութեամբ Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ պ. Մինաս Պալապանեանի և Ռոստովի գործարանատէր պ. Սերովբէ Անանեանի) վեհ. Կաթողիկոսին — — — 5055 »
- 25) Նոր Նախիջևանից, հանգանակութիւն պ. պ. Զարըխեանի և Գ. Աւաճախեանի, վեհ. Կաթողիկոսին — — — 1080 »
- 26) Ստաւրապոլից, Տիրուհի (Լուդկիա) Պապովեան, վեհ. Կաթողիկոսին — — — 2000 »
- ՎԵՀԱՓԱՌ. ԿԱՌՈՂԻԿՈՍՈՐ, ուղեկցութեամբ Ներսէս եպ. Խուղապերդեանի, Սահակ վարդապետ Աբխտեանի, պ. Խորէն Խրիմեանի և մի քանի ուրիշ աշխարհականների, ներկայ ապրիլի 19-ին ձիով մեկնեց ու Էջմիածնից և ալցիկց Օշական գիւղը, ապա անցնելով Ղալթա գիւղով, ուղեկցութեամբ բազմաթիւ ձիաւորների

և ոստիկանական պրիստավի՝ ալցեւեց կաթողիկոսներէ Բիւրա-
կան ամարանոցը, ապա Փարպի և Աշտարակ գիւղերը: Օշա-
կանում վեհափառը ալցեւեց ս. Մեսրոպ թարգմանչի նորա-
կառուց եկեղեցին և քարոզ խօսեց: Աշտարակում վեհափառը
ընդունեց հալոց և արքունական տարրական դպրոցներէ աշա-
կերտներին և ուսուցիչներին, հոգևորականութեանը և ժողովո-
ղին: Ապրիլի 22-ին վեհափառը կառքով վերադարձաւ ս. Էջ-
միածին:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ. Ինկատի առնելով խնդրի կարևորութիւնը և
նորա բաղմակողմանի քննութեան պահանջը, «Մուրճ»-ի ներ-
կալ համարում, Ներքին տեսութեան մէջ, տեղ ենք տալիս
մեր ամապրից դուրս երևեցած չօդածներին և նկատողու-
թիւններին, քահանայական խնդրի մասին, ընտրելով նո-
ցա միջից աջալիսիները միայն, որոնք աւելի կամ փոքր հա-
փով ուշադրութեան արժանի են: Նոյնպէս կը վարենք նաև
ապագայում, և ալդալիսով «Մուրճ»-ի մէջ ամփոփած կը լինեն
ալդ խնդրի մասին չալտնած բոլոր շատ թէ քիչ ուշադրու-
թեան արժանի հալեցակէտերը և նորան վերաբերեալ նիւ-
թերը: Մեր ընթերցողներին լղելով «Մուրճ»-ի 1893 թ. № 6-ի
վրալ, ուր ալդ խնդրը մենք դրել էինք վեհափառ կաթողի-
կոսի գալու առիթով, որպէս նաև «Մուրճ»-ի անցեալ համարի
վրալ (1894 թ. № 3), ուր ալդ խնդրը նորից շօշափել էինք
Արշէն երէցի չօդածի առիթով, ամապրիս ներկալ համարում
արտատպութեամբ առաջարկում ենք մեր ընթերցողներին
Արշէն երէցի «Գիւղական քահանայի քարոզ»-ը, Արիստակէս
հպ. Սեդրակեանի չօդածը ամբողջապէս, որպէս նաև մի քանի
ալ չօդածներ և նկատողութիւններ, որ լուս են տեսել ցալժմ:

ԿՐՕՆԱՓՈՒՈՒԻՒՆ. Ռուսաց „Церковныя Вѣдомости“ (Եկեղեցական
լրագիր) թերթը հաղորդում է թէ Տրապիզոնի բնակիչնե-
րից 100 ընտանիք խնդիրք են մատուցել Պոլիս, չունաց պատ-
րիարքին, չալտնելով իրանց ցանկութիւնը օրթողութիւն
ընդունելու և որ չունաց սինոդը հրամանագրել է Տրապիզոնի
չունաց առաջնորդին՝ կատարել խնդրատուններ խնդիրքը:

ԾԽԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄՈՒՄ. Թիֆլիսի առաջ-
նորդ Գէորգ հպ. Սուրենեանց մալխի 7-ին առանձին հրաւեր-
քով իւր մօտ ժողով գումարեց, նորա քննութեանը ենթարկե-
լու համար կանխապէս մի մասնաժողովի կողմից կազմած
ծխական հոգաբարձութիւնների կանոնադրութեան նախագիծը,
հրահանգելով պղդ մասին տրած պետական կանոններից:

ներկալ էին մօտ երեսուն հոգի: Դիտաւորութիւնը ալս է, որ ամեն եկեղեցու ծխականներ, իրանց ընդհանուր ժողովներում նշարեն 3—12 հոգի ծխական հոգաբարձուներ, որոնք պէտք է օգնեն երեցփոխին եկեղեցու բարենորոգութեան համար, խնամք տանեն աղքատ ծխականներին, օգնութեան դան քահանաների որբերին, իրանց կողմից օգնեն դպրոցի հոգաբարձութեան, պահպանեն հանգստարանները, հիմնեն հիւանդանոցներ և ալլն: Ընդհանուր ժողովը ալս ամենի համար կարող է ծխական տուրք նշանակել, և միաջն տուրք տուողները աշնուհետ կը մասնակցեն ընդհանուր ժողովներին:

Հրաւիրւածները քննութեան առնելով նախագծի լօղւածները, ի միջի ալ աւելի մասնաւոր փոփոխութիւնների, ընդունեցին որ նախագիծը կարօտ է լրացման ալս մտքով, որ բացի ծխականների ընդհանուր ժողովներից, պէտք է ստեղծել նաև մի ալ ընդհանուր ժողով՝ բաղկացած Թիֆլիսի բոլոր ծխական հոգաբարձուների նախագահներից, որոնք նիստեր կունենան թեմակալ առաջնորդի նախագահութեամբ աշն խնդիրների մասին, որոնց առարկալի ծաւալը (գերեզմանանոց, հիւանդանոցներ և ալլն) վեր է մի եկեղեցու ծխական հոգաբարձութեան գործելու նեղ շրջանակից:

ՈՐՆ Է ԱՆՀԻՄՆ: «Մործ»-ի նախորդ համարում մենք, ամսագրիս նոցն ալս բաժնում, մի համեմատական գնահատութիւն էինք արել «Արարատ» ում տպած Արչէն երէցի քարոզին և «Մշակ»-ում տպած Արիստակէս եպ. Սեդրակեանի (Ով հաւատաց) լօղւածին: Մենք գտել էինք որ Արիստակէս եպ. Սեդրակեանի լօղւածը, իւր էական մասերում, չնայ զրւածքի բանական կան ձևին, լաւ հաշուում է Արչէն երէցի լօղւածում դուրս բերած Հայրիկի հպեացքների հետ, ցոյց էինք սուել նաև գըլխաւոր տարբերութիւնը: Իսկ իբր ընդհանուր եղբակացութիւն՝ «Ով հաւատաց»-ը լրացուցիչ գրւած էինք նկատել Արչէն երէցի «Գիւղական քահանալի քարոզ» լօղւածին:

Մեր ալս դատողութիւնը մենք պահպանել ենք նաև մինչև այսօր, ընդդէմ մեր մամուլի բոլոր մնացած օրգանների, որոնցից «Մշակ»-ը, հակառակ մեր սպասածին՝ ամենին չուգեց ի նկատի առնել Արչէն երէցի գրւածքի արժանաւորութիւնները, իսկ «Նոր-Գար» ու «Արձագանք» ը, ինչպէս և վալել էր նոցա, ոչ միաջն արժանիք չգտան Արիստակէս եպիսկ. Սեդրակեանի վերին աստիճանի կարեոր լօղւածում, ալ և նորա արժանաւորութիւններն իսկ լանցանքներ հոչակելով՝ պիղծ

ինսինուացիաներով նորան հալածանքի մատնելու թեւադրու-
թիւններէն անգամ չեա չքաշենցին:

Ահա ալսպէս միակողմանի կերպով տրամադրած թեր-
թերից երկուսը՝ «Մշակ» մէկ կողմից, «Արձագանք» — միւս
կողմից, բոլորովին անտես առնելով աչն, ինչ մեր արած նկա-
տողութիւնների մէջ ամենակարեւորն էր, տարբեր նպատակ-
ներով արտատպեցին մեր ասածից միմիայն աչն մի քանի
տողերը, ուր մենք ցաւ էինք չալտնել որ Արիստակէս եպիսկ.
Սեղրակեանը գիւղացիների խօսքերը առանց ալ և ալութեան
նա և Հալիլիկին է վերագրել: Մենք դուիս չենք դնիլ «Ար-
ձագանք»-ի հետ, դա զուր կերպով վատնած աշխատանք
կը լինի մեր կողմից: Արտատպելով «Մուրճ»-ից միայն անց
տողերը, «Արձագանք»-ը չատուկ նպատակներ ունէր, որոնց
մաքրութեանը հաւատացող է ճարում ալ թերթը, բարեբաղ-
դաբար առանց որ և է չաջողութեան:

Ալ է «Մշակ»-ը, որը արտատպեց նոյն տողերը — բաց
միայն մեր ասածը հերքելու համար:

«Մշակ»-ը «անհիմն» է համարում մեր ասածը, հրաւիրում
է մեզ նորից կարգաւ Արիստակէս սրբազանի յօւածը համոզ-
ւելու համար, որ ալ յօւածում «գիւղացու պարզ փիլիսոփա-
լութեամբ աղէտ ժողովրդին շատ ուսեալ քահանայ չի կպիր»
և ալն խօսքերը գիւղացիներին են վերագրած. և ալ ապա-
ցուցանելու համար նա ցոյց է տալիս չակերտների սկիզբը և
վերջը, որոնց մէջ ամփոփւած են միայն գիւղացիների արտա-
սանած խօսքերը:

Ինչ միամտութիւն! «Մշակ»-ի ալ խօսքերը մեզ զար-
մացնում են, և մենք, արդարը խոստովանած, չէինք սպասում
թէ «Մշակ»-ը կ'աշխատի ուրանալ մի բան, որ լուսի չափ պարզ
է. Նրը մենք ասում էինք թէ գիւղացիների խօսքերը վերա-
գրած են նա և Հալիլիկին, մենք շատ լաւ ինկատի ունէինք
բոլոր չակերտները, գիտէինք որ աչն խօսքերը նա և Արիստա-
կէս եպ. Սեղրակեանի յօւածում գիւղացիներին են վերագրած,
թէ և արտագրած էին բնագրից ոչ կատարեալ ճշտութեամբ.
բաց մեր ասածը սա էր, որ գիւղացիների ալ խօսքերը նա
Հալիլիկին են վերագրած. ճիշդ է, ալ մասին մենք ապացոյց
չէինք բերել, բաց միայն աչն պատճառով, որ ապացոյցի
կարօտ չէինք համարում ալ:

«Մշակ»-ը ալ մի հարցնում է մեզ թէ «ալ որտեղից է
դուրս բերել «Մուրճ»-ը թէ գիւղացիների խօսքերը (Արիստա-

կէս եպ. Սեղրակեանի լօգածում) վերագրւած են նաև Հայ-
րիկին» (Տես «Մշակ» № 44),

Մեր պատասխանը սա է, որ մենք աչդ դուրս ենք բերել
Արիստակէս եպիսկոպոսի լօգածի ամենավերջին տողերից, ուր
հեղինակը, գիւղացիների կարծիքները գիւղական քահանայի որ-
պիսութեան մասին առաջ բերելուց չետոյ՝ ընթերցողի համար
անհասկանալի ձևով վերջակէտ է դնում և անպիսի զարմանք-
ներ չափոնում, որ լոյսի պէս պարզ երևում է թէ հեղինակը
գիւղացիների չափած մտքերը նաև Արշէն երեցին և կամ
նոյն իսկ Հայրիկին է վերագրում, Շատ կարելի է, որ Արիստա-
կէս եպիսկոպ. Սեղրակեան հիմնաւոր պատճառներ ունի աչդ-
պէս վարելու, բայց թէ ինչու նա աչդպէս է մտածում՝ աչդ
բացատրւած չէ «Ով հաւատաց» լօգածում. Բայց որ միայն
աչդպէս պէտք է հասկանալ նորա լօգածի վերջին տողերը,
— աչդ մասին ոչ մի կասկած չպէտք է արտաչափուէր:

Տարաբախտաբար «Մշակ»ը, շատ լաւ զգալով մեր նկատու-
ղութեան հիմնաւոր լինելը՝ աշխատել է մի բան ծածկել—որ
չպէտք է ծածկէր, մանաւանդ որ դորանից չետոյ՝ նա մի շարք
լօգածներ և նկատողութիւններ տպեց, որոնք անիմաստ կը
լինէին եթէ «Մշակը» մեր նկատողութիւնը անկեղծօրէն ան-
հիմն դտած լինէր...

Ոչ, փոխանակ տպւածի իմաստը ծածկելու, ինչպէս աչդ
փորձել է անել «Մշակի» խմբագրութիւնը (մի վարմունք, որի
համար լօգածի հեղինակ Արիստակէս եպ. Սեղրակեանը բնա-
կան է որ պատասխանատու չի կարող լինել), մենք սպասում
ենք որ հրապարակ հանեն ան իրողութիւնները, որոնք հիմք
են ծառայել սրբազան Արիստակէսի առաջին անգամից անհաս-
կանալի տողերին: Նորագոյն իրողութիւնների մերկացումը
կը փարատէր շատ տարակուսանքներ և, բացի աչդ, դորանով
իսկական ծառայութիւն մատուցւած կը լինէր այժմ հերթական
զարձած քահանայական խնդրին, իսկ կարևորը—հէնց աչդ է:
Իսկ մինչև հակառակը ապացուցող իրողութիւնները հրապա-
րակ կը հանեն և կը լուսաբանեն, մենք կը մնանք մեր հա-
ւատի մէջ որ Հայրիկը իրանից չետոյ թողնելու է իւր բա-
րոյական և մտաւոր մակերևութով աւելի բարձր քահանա-
յական դասակարգ, քան ինչ նա է այժմ. Գորա՝ գրաւա-
կաններից մէկը հէնց ան է, որ նա ինքը իւր օրգանում,
«Արարատում», հրապարակախօսութեան առարկայ է դարձնում
քահանաների խնդիրը և դորանով հրաւիրում ամենքին՝ աչդ

խնդրի ընթացք տալուն մասնակից լինել, Քահանաների մասին միշտ գրել է, բայց դորանից օրակարգի խնդիր դարձնելը կատաբուլ է միայն այսօր, շնորհիւ Արշէն երէցի լօղածի: Մենք ալ չանգամանքը շատ բարձր ենք գնահատում, որպէս շատ բարձր ենք գնահատում նաև այն, որ ինքը Հալիկը շատ բարձր գաղափար ունի քահանայի կոչման մասին:

ԹԻՖԼԻՍԻ. ՀԱՅՈՒՆԵԱՅ ԲԱՐԵՂ. ԸՆԿ. Տարեկան տպած հաշիւից, որ ստացւել է մեր խմբագրութեան մէջ, երևում է հետեւալը: 1893 թ. Ընկ. վարչութիւնը ունեցել է 23 նիստ և մի խառն ժողով ս. Նշանի ուսուցչական խմբի հետ: Ընկերութեան հաշիւով պահւող ս. Նշան եկեղեցու մի դասարանեան օրիորդաց դպրոցում աշակերտուհիներ եղել են 99 հոգի, (6 ով աւելի քան 1892-ին), որոնցից 61 հոգի վճարել են տարեկան 6 ռուբլի թոշակ, իսկ 38 հոգի ընկերութիւնից ստացել են հասույթներ դասական պիտուքների համար: Մալիսի քննութիւններին աւարտել են 11 հոգի վկայականներով: Ուսումնարանի վրա ծախսւել է 2580 ռ. 20 կոպէկ):

Ընկերութեան հիմնած կար ու ձևի ուսումնարանում (հիմնած 1888-ին), եղել է 68 աշակերտուհի և 12 աղատ ուն. կնիքներ, որոնցից 8-ը վճարով (ամսական 3 կամ 4 ռուբլի), իսկ 4-ը ձրի: Աւարտել են 1893-ին 9 հոգի (4-ը վարպետուհու և 5-ը վարպ. օգնականի վկայականներով), որոնցից մէկը մնացել է դպրոցում օգնականի պաշտօնով:

Ընկերութիւնը, որպէս չափանի է, հաստատած է նաև խոհարարական դասընթացք, որ տեւում է երկու ամիս, և տարւալ ընթացքում հետևապէս մի քանի անգամ կրկնւում է՝ նորանոր ունկնդիրների համար: Ընկերութիւնը ալ կուրսերին չատկացրել է տարեկան 300 ռուբլի միայն, և գործը պահպանւում է աշակերտող օրիորդների և տիկիճների վճարներով (25-ական ռուբլի, կան և ձրիներ): Հաշիւ մէջ ալ կուրսերի մասին մանրամասնութիւններ չկան:

Կար ու ձևի դպրոցի տեսչուհին է տիկին Վ. Ռոտինանց, որի նախաձեռնութեամբ հիմնւած են և նորա ձեռքով կառավարւում են նաև խոհարարական կուրսերը:

Ընկերութիւնը իւր տարեկան ժողովն ունեցաւ ապրիլի 23-ին, որի շարունակութիւնը փետրվարի մինչ մալիսի 3-ը վարչութեան նոր անդամուհիներ ընտրելու համար: Ընտրութիւնները կատարւեցին 116 հոգու մասնակցութեամբ և թեմակալ առաջնորդի նախագահութեամբ: Առաջին անգամ ալ

ընկերութեան մէջ իրար հետ մրցում էին ընտրեալների երկու ցուցակներ, Յաղթութիւնը մնաց հին վարչութեան կողմնակիցների կողմը:

Քւէարկեցին վարչութեան անդամութեան համար վեց հոգի որոնցից ընտրեցին՝ տիկիններ՝ Սոֆիա Բաքալեան (87 սպիտակ), Ե. Թալիրեան (83 սպ.), Կատ. Եւանդուկեան (82 սպ.), իշխ. Մարիամ Բէկթարէզեան (80 սպ.): Հին անդամներն էլ չորսը դեռ ևս մնում են իրանց պաշտօնում մինչև չորս ամիս ձառաջութեան լրացնելը:

Փոխանդամութեան համար քէարկեցին և ընտրեցին տ. տ. Յարութիւնեան, Խուդապերդեան, օրիորդներ՝ Ն. Խատիսեան, Մ. Մատինեան և Վ. Փոստոլեան:

ՆԻՒՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 1) Մարգար Պապովեանի վախճանելովը՝ զօրութիւն է ստանում նորա թողած կտակը, որով նա չատկացրել է 100.000 ռուբլի Նոր-Նախիջևանում հիմնելիք մի երկրորդ արհեստագիտական դպրոցին և 50.000 ռ. Ս. Էջմիածնին:

Ստաւրապոլցի Մարգար Պապովեանը, որ հաւանական է թէ ներկայիս ռուսա-Հայերի մէջ ամենահարուստ մարդն էր, վախճանեց ներկալ ապրիլի 16-ին Պետերբուրգում, հոգեկան հիւանդութիւնների հիւանդանոցում, ուր նա Ստաւրապոլցի նոր էր փոխադրւած հոգեկան հիւանդութիւն ստացած լինելու պատճառով: Հանգուցեալը երկու անգամ էր պսակւած. առաջին կնոջից որդի չունեցաւ. 68 տարեկան հասակում նա, 1889 թւականին, նորից ամուսնացաւ մի երիտասարդ աչրիի հետ, որից ունեցաւ մի աղջիկ և մի տղա: Զրկելով իւր բոլոր մօտ ազգականներին, 1893-ին շինւած կտակով հանգուցեալը իւր կնոջը չատկացրել է իւր մի մեծ տան եկամուտը (տարեկան 3000 ռուբլի), 500.000 ռուբլի թողել է իւր աղջկանը, մնացած իւր տղին, որ ալժմ երկու տարեկան է: Ժառանգները կ'ստանան իրանց բաժինները չափահասութեան հասնելով: Թողած կարողութիւնը հաշւում են 6—8 միլիոն ռուբլի:

2) Ներկալ ապրիլին վախճանւած (Թիֆլիսցի) Յովհաննէս Էմինեանցի աչրին նւիրել է Թիֆլիսի Էջմիածնեցոց ս. Մարիամեան օրիորդական դպրոցին (Հաւաքար թաղում) 500 ռուբլի:

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆ Թիֆլիսում: Քառաձաչն երգեցողութեան տարածողը հայերիս մէջ պ. Կարա-Մուրզան, Էջմիածնի ճեմարանում պաշտօնը թողնելուց և ապա Նոր-Նախիջևանում մի քանի կոնցէրտներ տալուց չետու, մօտ երկու ամիս է ինչ Թիֆլիսում պատրաս-

տում և կազմակերպում էր մի մեծ երգեցիկ խումբ՝ մի քանի կոնցերտներ տալու համար։ Այդ նորակազմ խումբը բաղկացած մինչ 70 հոգուց երկու տևից, ապրիլի 23-ին, ղեկավարութեամբ պ. Կարա-Մուրզաի տեղ իւր առաջին կոնցերտը արքունական թատրոնում։ Խմբին մասնակցող օրիորդները և կանաչք, թույլ շուրջ 20 հոգի, կրում էին Ախալցխայի հագուստ։ Երգեցին 12 երգեր, որոնցից առաջին բաժնում՝ Բամբ որտան (պ. Դաւթեան և խումբը), Տէր-կեցո զՀաւս (պ. Բար-խուդարեան և խումբը), Զարթիր սիրտ իմ վշտահար (խումբը), Մալր-Արաքսի (պ. Զամբաբեան և խումբը), Հասօի եղները (պ. Ն. Մատինեան և խումբը), Որ վառեցեր (խումբը), երկրորդ բաժնում՝ Նաւաստիք (Դաւթեան և խումբը), Լոռիկ (Բարխ. և խումբը), Գացէք տեսէք ո՞վ է կերել զէծ (երկու խումբ), Որ մահկանացուն (Զամբաբեան և խումբը), Մուկուչ աղբէր (Բարխուդարեան, Դ. Յակոբեան և խումբը), Երգերի մէջ ամենից շատ լաջողութիւն ունեցան ժողովրդական երգերը, իսկ սոցա մէջ՝ մանաւանդ Լրրիկը («Պաղ աղբիւր»), որի մէջ առանձին շնորհք ցուց տեղ երիտասարդ տենոր պ. Բարխուդարեանը։ Վերջինիս ձայնը—tenore di grazia—փոքրիկ ձայն է, բայց զիւրեկան, և որ զխաւորն է՝ երգիչը ցուց տեղ երգելու շնորհք։ Միւսներէից աչքի էր ընկնում պ. Դաւթեան, որը սակաւ իւր ուժեղ ձայնի հետ չէր միացնում երգելու գրաւչութիւն։ Իսկ պ. Զամբաբեանը բալորովին զուրկ երևաց երաժշտականութիւնից։

Երկրորդ համերգը տրւեց ապրիլի 30-ին, աչն նպատակով, որ արդիւնքի կէսը չատկացնէի Հալոց Բարեգ. Ընկերութեան, սովեալների օգտին։ Երգեցին 15 երգեր. նորերն էին՝ «Անի քաղաք», «Կիլիկիա», «Զմեռն անցաւ», «Առաւօտեան թռչնոց երգեր», «Կռռնիկ», «Աչծեամն», «Օրօրցի երգ», Լերմոնտովի (ռուսերէն լեզուով), «Բուրք բարձր սալքի չինար», «Հով արէք» և «Անցան սարեր», «Զինչ ու զինչ տամ լողոր դուն», «Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի»։ Երկրորդ համերգում մասնակցում էին նոյն խումբը և սոլօ երգիչները, բացի պ. Զամբաբեանից, բայց մասնակցութեամբ տիկ. Ղեկ. Առաքելեանի։

Պր. Կարա-Մուրզաի համերգներից Թիֆլիսի հասարակութեան մի մեծ մասը առաջին անգամ առիթ ունեցաւ ծանօթանալու հալկական երգերի եղանակների, բայց մանաւանդ ժողովրդական երգերի հետ։ Ոչ ժողովրդականներից համեմա-

տապէս ամենալաջողածներն էին «Բաւ է եղբարք», «Զարթիր սիրտ իմ», «Որ վառեցեր»:

Օգտուած ենք առիթից մի քանի խօսք ասելու պ. Կարա-Մուրզայի իրա մասին: Պէտք է ասել որ Նորա նկատմամբ մեղանում արդէն սկսել է հասարակաց կարծիք կազմել: Դա զարմանալի չի թւիլ, եթէ նկատի առնելու լինեք որ այս տաւը տարաւ ընթացքում, այն ժամանակից ի վեր երբ նա Կովկասում սկսել է գործել, մինչ այժմ մօտ 80 համերգ է տւել, ինչպէս այդ երևաց վերջին համերգի ափիշալից: Նորա գործելու ահագին եռանդը ամեն տեղ մեղանում հանդիպել է համակրող շրջանների, որոնք ողևորել են քառաձայն երգեցողութեան գաղափարով և չարգանքով են վերաբերել դէպի գործը: Տարիների ընթացքում սակաւն պ. Կարա-Մուրզան չարուցել է իւր դէմ նաև թշնամանքներ, իսկ համակրողների շրջաններում քննադատներ: Հանգամանքը սա է որ պ. Կարա Մուրզայի երգեցիկ խմբերը վարժուած են ոչ ձայնագրութեան, այլ միայն լսողութեան վրայ, խմբերն ևս մշտական չեն, այլ փոփոխական և բաղկացած են սիրողներից: Այդ հանգամանքներում բուն երաժշտական երգեցողութիւնը զարգանալ չի կարող, հետևապէս այդ կերպ գործը իւր կողմը չի կարող գրաւել նոցա, որոնք երգեցողութեան մէջ Նուրբ երաժշտականութիւն են որոնում, իսկ մասնակցողների մէջ՝ երաժշտական կրթութիւն: Եւ ահա դորանից ծագում է մի այլ հարց—թէ արդեօք ինչն է այդ կերպ խմբական երգեցողութեան օգուտը և ինչ ապագայ ունի նա: Զուտ երաժշտական տեսակէտից դատողների պատասխանը չատնի է թէ ինչ կը լինի—կատարեալ դատապարտութիւն: Եւ սակաւն մենք գտնում ենք այդ եղրակցութիւնը իբր հետևանք խաբուսիկ տրամաբանութեան: Որովհետեւ պ. Կարա-Մուրզայի նկատմամբ խնդիրը ուղիղ չէ դրած: Նորա նկատմամբ հարցը չպէտք է դրած լինի այնպէս թէ որքան բաւարարութիւն է տալիս նա չկուլալի երաժշտագետին, այլ թէ որքան նա ազդին օգուտ է տալիս Մի երգ երգւում է ոչ միայն չկուլա անցած երգչի բերանով, այլ և ամբողջ ազգի: Հաւաքը սովոր է միաձայն երգին, այլ ևս չենք խօսում նորա կանոնաւորութեան մասին, որ կրիտիկայի դիմանալ չի կարող: Երգելու ճորձն մոցնել ազգի մէջ, ահա թէ ուր է տանում պ. Կարա-Մուրզայի գործունէութիւնը: Նա պրոպագանդիստ է—և այդ է նորա ուժք. ալետեղ, ուր ժողովուրդը գաղափարանգամ չունի քառաձայն երգեցողութեան մասին, Կարա-Մուրզայի չատուկ տա-

դանդը կարողանում է կատարեալ հում ձաշներից խմբական օգտակար ձաշներ պատրաստել, նոցա ամբողջութիւնը հմուտ դասաւորութեամբ նոյն հասարակութեան առջևը դնել և նոյն ժողովրդի երգերը իրան լսեցնել աւելի ներգաշնակ ձևով: Որ դրանով ժողովուրդ է կրթում—ինչ կասկած կարող է լինել աչգ մասին: Շնորհիւ Կարա Մուրզաների-ոչ թէ հատ-հատ մարդիկ, այլ ամբողջ մի ազգ մի-երկու սերունդների ընթացքում պէտք է երգելու մի նոր, աւելի կատարեալ, ձև իւրացնի և իւր ժողովրդական երգերը բեղնաւորել սովորի բոլորովին ալ ծաւալով քան մինչ ալժմ եղած է:

Աչգ դործունէութիւնը—առաքելութիւն է, որին շատ սակաւները միաջն ընդունակ են. իսկ հաւերիս մէջ Կարա-Մուրզաները ոչ միաջն սակաւ են, ալ նա միակն է և հիմք էլ չկալ չուսալու թէ նորա տաղանդով մի երկրորդը շուտով կու-նենանք:

Մենք կարծում ենք ուրեմն որ պ. Կարա-Մուրզայի դերը ոչ միաջն կատարւած է, ալ և մնում է նրան կատարելու: Նորա երգեցիկ խմբերը օգտակար ծառայութիւն են արել և կը շարունակեն օգտակար լինել: Թէրես հարկ կալ ալժմեանից մի փոփոխութիւն մտցնել նորա ընդունած սխառմի մէջ. և աչգ փոփոխութիւնը մեր կարծիքով այն պէտք է լինի, որ նա ալժուհեան ունենալ աշխատակիցներ չաջող երգիչներից գոնէ մի մի հոգի ամեն մի հիմնական ձաշի համար: Աչգ պալմանով նորա կոնցերտների բաղդը կախւած չի լինիլ պատահական և կասկածելի արժանիք ներկայացնող սոլօ երգիչներից: Պրն. Կարա Մուրզայի գլխաւոր ղեկավարութեամբ՝ նոքա կօգնեն նաև խմբերը վարժեցնելու: Աչգայիսով կոնցերտները նաև երա-ժշտական տեսակէտից վաստակ կունենալին:

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ օրիորդաց դպրոցի մասին «Մուրճ» ի անցեալ համարում հաղորդած տեղեկութիւնների առթիւ, նոյն դպրոցի Նախկին և ալժմեան հոգաբարձուներից բժշկապետ պ. Միք. Շահպարտեանցը ինդորում է ուղղել այս սխալը, թէ լիշած 24.000 ռուբլու ֆոնդի տոկոսներով ոչ թէ 10 որդեգրուհիներ պէտք է պահեն, նոյն ուսումնարանում, ալ երեք որդեգիրներ Մոսկաւի Լազարեան ձեմարանում. իսկ երբ աչգ ֆոնդը կազմւած կը լինի քարաւնսարալի արդիւնքներից, հոգաբարձութիւնը պէտք է սկսի կազմել մի երկրորդ ֆոնդ՝ 10 որդեգրուհիներ պահելու համար Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցում:

ՊՐ. Գ. ՂԱՐԱԶԵԱՆԻ իողաձոր որ վերջանում է «Մուրճ»-ի ներկայ համա-
րում, հիդրինակի համաձայնութեամբ շուշեցի պ. Արշակ Օհա-
նեսանց իւր վրայ է վերցրել արտատպելու առանձին բրո-
շուրով, զուտ արդիւնքը չատկացնելով սովեալների օգտին
Գրքովը օրերս իդս կը տեսնի:

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐԻՆ. Կրկնող դէպքերի պատճառով՝ մենք
նորից ստիպւած ենք խնդրելու Թիւրքալի մեր բաժանորդներին,
որ դրամ չուղարկեն մեզ պատւիրած (ապահովագրած, recom-
mandée) ծրարների մէջ, ալ ուղարկեն դրամակա՛ն ծրար-
ների մէջ, Թիւրքիալի պոստի ծառայողները, խմանալով որ
պատւիրած նամակներով դրամ է ուղարկւում, ճարպկութեամբ
բաց են անում ալ ծրարները, դրամը գողնովի վերցնում են և
նորից ծրարները կպցնում են, թողնելով սակա՛ն հետքեր:
Բաց պոստը ալ բանի համար պատասխանատու չլինելով
դրամը կորչում է ուղարկողի և հասցէատիրոջ համար: Նրկու
ամիս առաջ ակապիտով կորաւ Կերասունից մեզ ուղարկւած
12 ռուբլի, ալ ամիս՝ Կ. Պոլսից ուղարկւած 3 ռուբլին:

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ՏԱՌԵՐԻ ՀԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ: Բոլոր նոքա, ովքեր տպա-
գրական գործով են զբաղւած, լինեն նոքա հեղինակներ, հրա-
տարակիչներ, խմբագիրներ, սրբագրողներ, գրաչարներ և
տպարանատէրեր, — աւելացրէք դոցա վրայ նաև բոլոր ընթեր-
ցողներին, դոքա ամենքը միաձայն կը վկայեն հայերէն հին
տիպարի տառերից ոմանց մեծ անլարմարութիւնները: Անլար-
մարութիւններից ամենակարևորը ալն է որ շատ տառեր իրար
նման են ալնքան, որ սրբագրութեան ժամանակ՝ շատ անգամ
չի լինում ջոկել ուղիղ սխալից: Հետևանքը լինում է ալն,
որ մաքուր տպագրութեամբ շատ տպագրական սխալներ են
մնում, անհամեմատ աւելի, քան ալն նկատուում է եւրոպական
լեզուներով տպած գրքերում: Ահա ալն տառերը, որոնք ներ-
կայացնում են ալն նմանութիւնը իրար հետ. ա և տ, գ և դ,
զ և ղ, շ և չ, ս և ո: Բաւական է որ սրբագրական թերթերում
ալն տառերը շատ մաքուր տպւած չլինեն, որպէս զի չլիթու-
թիւնը անխուսափելի լինի:

Ալն անլարմարութիւնը հեռացնելու համար՝ պէտք է
ձեռք վերառնել հին տիպարի տառերից և նոցանից ամեն
մէկին մի որ և է բնորոշ և աչքի ընկնող գիծ՝ չատկացնել և
ոչ թէ նոցա զանազանելու դերը թողնել աչքին հազիւ տեսա-
նելի բարակ գծիկներին:

«ՄՈՒՐՃ» Ը ԶՐԻ ԿԱՐԳԱՅՈՂՆԵՐԻՆ, Մեզ ամեն կողմերից ստուգ տեղեկութիւններ են հասնում թէ «Մուրճ»-ը բազմաթիւ ընթերցողներ ունի հաջաբնակ քաղաքներում: Մինչև իսկ բաժանորդներից շատ շատերը տրտուկներ են չալտնում աչն հանգամանքի համար, որ իրանց օրինակները ձեռքից ձեռք անցնելով՝ կորչում են և որ իրանք շատ անգամ ստիպւած են լինում աւելի ուշ կարդալ քան նոցա ձեռքից խլող ձրի ընթերցողները: Խմբագրութիւնը ի հարկէ, միայն ուրախութիւն կարող է զգալ որ «Մուրճի» ընթերցողները ալիքան շատ են: Բայց ինչ անուն տանք աչն բանին, որ ալիքան պատրաստակամութեամբ ուրիշի բարիքից օգտւողները աչնքան զգացմունք չունին որ հասկանան թէ ուրքան վալել է, երբ նոցա միջից բաժանորդ գրել կարողացողները տարիներ շարունակ կարդում են ամսագրի մեծ դեֆիցիտների մասին և, աչնուամենայնիւ, զլանում են բաժանորդ գրելու և ամսագրի հրատարակութիւնը նիւթապէս ապահովելու: Մենք գիտենք որ ամեն ոք աշխատում է իւր ծանօթների մօտ իւր ալի վնասակար վարմունքը որ և է կերպ արդարացնել, — բայց տգեղ վարմունքը տգեղ էլ կը մնալ...

«ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՐԱՄԵԱԿ» լուսատիպ պատկերի համար, վիեննայի «Հանդէս Ամսօրեայ»-ին հասցնելու համար ստացած ենք՝ 1) Մերից պ. Միք. Մխիթարիանից 2 օրինակի համար 2 ռուբլի (հասցէ՝ Мервѣ, Закарпійск. обл., Михайлу Павловичу Мхитаряну, 2) Դերբենդից, պ. Կ. Ղազարեանից 2 օրինակի համար 2 ռ. (հասցէ՝ Дербентъ. Учителю городск. училища Константину Казарянцъ, 3) Ատտարիից, պ. Գ. Շահպաղեանից 1 օրին. համար 1 ռ. (հասցէ՝ Астара, Бак. губ., Ленк. уѣздъ, Г-ну М. А. Агаронову, для передачи Г. Шахбазяну):

«ՄՈՒՐՃԻ» ԱՊԱՌԻԿՆԵՐԸ: Ամսագրիս բաժանորդներից նոցա, որոնց վրայ ապառիկ կալ, խնդրում ենք շտապեն չուտով աչն հասցնել խմբագրութեանս:

† ԿՈՄՍ ՅՈՆ ՇԱԿ. Ապրիլին մեռաւ Հոռում 79 տարեկան հասակում կոմս Ադոլֆ-Ֆրիդրիկ Փոն Շակ, գերմանացի լատին բանաստեղծ և արեւելագէտը: Նա ուսել էր համալսարաններում իրաւագիտութիւն և ուսումնաւարտելուց լատի ճանապարհորդեց Իտալիայում, Նեպոլսում, Սիրիայում, Թիւրքիայում, Յունաստանում և Իսպանիայում: Ապա վերադառնալով հայրենիք՝ հաստատուեց Միւնխէնում և սկսեց հրատարակել իւր գլխատր

աշխատութիւնները՝ «Պատմութիւն գրականութեան և զրամատիկական արհեստը արաբների մէջ խաչանիւծում և Սիցիլիայում Բացի ալդ Նա զրադեց յթարգմանութիւններով պարսկերէնից և, ի միջի ալոց, թարգմանեց Ֆիրդուսի՛ի ոտա նաւորներից շատերը:

† ՆԻՆՕՇԻԼԻ Ներկայ ապրիլի 29-ին Օդուրգէթի դաւառում վախճանեց երիտասարդ վրացի վիպասան Իգնատիւ Խնդորսկա, աւելի չափունի Նինօչիլի անունով, Նորա վէպերի նիւթը վերցրած են զիւղական կեանքից: Համարում էր տաղանդաւոր վիպասան: ԵՒԼԱԽ-ՄԻԻԼՔԻ, որի ածուրդով ծախելու մասին անցեալ ամիս հաղորդել էինք, դատարանի վճռով մնաց Առաքել Ծատուրեանին և բաքեցի Հաջի Զէչնալ Արդին Թաղիսի վրայ 205.000 ռուբլով:

ՆՈՐ ՍՍՅՅԱՄ ԳՐԲԵՐ

- 1) ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Խ.—«Յաւելած Եղիշէի Պատմութիւն վարդանանց ըստ Անճևացեաց օրինակի ռուս-հայերէն բառգրքին»: Մոսկա, տպ. Բ. Բարխուդարեանի, 1893 թ. գինն է ?:
 - 2) ՍՄԱՅԼԱ-ից Ստեփանէ, Խորէն ծ. վ.—«Ինչպէս պէտք է ապրել բաղդաւոր լինելու համար»: (Արտատպած «Արարատ» ամսագրից)՝ վաղարշապատ, տպար. Ս. Կաթուղիկէ Էջմիածնի, 1894 թ., գինն է ?:
 - 3) CARRIERE, A.—„Nouvelle sources de Moïse de Khoren. Etudes critiques. Supplément“. Vienne, imprimerie des Mechitharistes. 1894 թ., գինն է 1 ֆլորին կամ 2 կրոն:
- (Պրոֆեսոր Ա. Կարրիէր.—«Մովսէս Խորենացու նոր աղբիւրներ»: Յաւելած):
- 4) ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ.—«Պապիկ և Թոռնիկ»: Գիւղական ժողովրդի թոռնիկներու համար: Տպար. Մալր Աթոռոյ ս. Էջմիածնի, գինն է 60 կոպէկ:
 - 5) OHANIAN, Christophe.—„Contribution à l'étude des affections hérédosiphilitiques de l'oeil.—Tèhse inaugurale présentée à la Faculté de Médecine de l'Université de Genève pour obtenir le grade de docteur en médecine.—Genève, impim. J. Stander. 1894 թ.:
 - 6) ԱՐԱՔՍ, հինգերորդ (1893 թ.) տարւայ երկրորդ գիրքը: Ս. Պետերբուրգ, տպ. Լիբերմանի: Գինն է 2 ռ. 50 կոպ. (խոկ 2 զբրքի բաժանորդագիրն է 3 ռ.):
 - 7) ԷՐԼԷՆՎԷՅՆ. Ս. Թարգմ. օրիորդ Ն. Խ. Յովհաննէս Յուս. Հրատար. Խարկովի հայ ուսանողների, Թիֆլիս տպ. Մ. Ռոտինեանցի. 1894. գինն է 5 կոպ.: